

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 7/5

24 փետրվարի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի 04.12.2014 թ-ի դիմումը ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2013 թ-ի թիվ 40/3 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսելու և որոշում կայացնելու վերաբերյալ:

Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի դիմումում բերված փաստարկները.

Դիմումատուն նշում է, որ 15.07.2013 թ-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովին ներկայացվել է բողոք ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2122045 ակտի դեմ: Հանձնաժողովի կողմից 21.08.2013 թ-ին ընդունվել է թիվ 40/3 որոշումը, որով բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ ստուգման ակտին առնչվող հանգամանքները պարզաբանելու համար նյութերը ուղարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչություն:

Հարկ է նշել, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից նյութերը հետ են վերադարձվել Էրեբունու ՀՏ՝ հետաքննության հիմքերի բացակայության պատճառով:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանը խնդրում է վերսկսել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2013 թ-ի թիվ 40/3 որոշմամբ կասեցված վարույթը և կայացնել որոշում:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով)՝ ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2013 թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի 15.07.2013 թ-ի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2122045 ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 40/3 որոշումը, որի համաձայն բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցվել է, քանի որ քննարկվող դեպքի վերաբերյալ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչությունում ստացվել են նյութեր:

Տվյալ դեպքում հաշվի առնելով, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ հետաքննության վարչության կողմից նյութերը հետ են վերադարձվել Էրեբունու ՀՏ, ինչպես նաև հիմք ընդունելով Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի 04.12.2014 թ-ի դիմումով բերված միջնորդությունը, Հանձնաժողովը վերսկսում է 21.08.2013 թ-ի թիվ 40/3 որոշմամբ կասեցված վարույթը՝ ներկայացված բողոքի վերաբերյալ ըստ էության որոշում կայացնելու համար:

Նշվեց նաև, որ համաձայն Էրեբունու ՀՏ պետի 13.05.2013 թ-ի թիվ 2214503 հանձնարարագրի Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի մոտ իրականացվել է հսկիչ-

դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 11.06.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 2214503 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

«ՏՆ Էրեբունու ՀՏ հարկային տեսուչ ժորա Աստվածատրյանը 11.06.2013 թ-ին, ժամը 14:00-ին ք.Երևան, Նար Դոս փող. 4 հիվանդանոցի հարևանությամբ գործող Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանին պատկանող մանրածախ առևտրի խանութից կատարված հսկիչ գնման (1 հատ դուր՝ 45.000 դրամ) համար վճարված վերջնահաշվարկի կանխիկ գումարը՝ 25.000 դրամ, վաճառող Վ.Ղազարյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 14:03-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 0 դրամ: Տեսուչների պահանջով չմուտքագրված գումարը՝ 25000 դրամը, ժամը 14:04-ին մուտքագրվել է ՀԴՄ, նորից դուրս է բերվել Z հաշվետվությունը՝ գումարով 25.000 դրամ: Գնված ապրանքը հարկային տեսուչների կողմից հետ է վերադարձվել, ինչի վերաբերյալ կազմվել է համապատասխան ակտ:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ պետի կողմից 13.06.2013 թ-ին հրապարակվել է թիվ 2122045 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է Էրեբունու ՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2122045 ակտը, որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Քննարկման ընթացքում հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձը (այսուհետ նաև գնորդ) նշեց, որ Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանին պատկանող մանրածախ առևտրի խանութում իր կողմից կատարվել է դուռ պատրաստելու պատվեր: Դռան արժեքը կազմել է 45.000 դրամ: Նախապես վճարվել է 20.000 դրամ կանխավճար, որը մուտքագրվել է ՀԴՄ և տպվել է համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Մի քանի օր անց գնորդին հայտնվել է դուռը պատրաստ լինելու մասին: Հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձի պնդմամբ, նա ներկայացել է խանութ և վաճառող Վ.Ղազարյանին վճարել պատվիրված դռան մնացած գումարը՝ 25.000 դրամը, որը, սակայն, վերջինիս կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և չի տրվել համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն: Այնուհետև գնորդը դուրս է եկել խանութից և խանութ են մտել վերոգրյալ հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձինք՝ ՀԴՄ կտրոն չտրամադրելու փաստն արձանագրելու համար: Որոշ ժամանակ անց ներկայացել է Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանը: Ծանոթանալով իրավիճակին նա պահանջել է, որպեսզի ներկայանա գնորդը, սակայն տարբեր պատճառաբանություններով նա այդպես էլ չի ներկայացել:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձը նշում է, որ գնված ապրանքի դիմաց վճարել է 25.000 դրամ, սակայն Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանն իր հերթին պնդում է, որ նման գումար չի վճարվել: Վերջինիս պնդմամբ վճարվել է միայն կանխավճարի գումարը՝ 20.000 դրամ, որն էլ իր կողմից հետ է վերադարձվել հսկիչ գնումն իրականացրած պաշտոնատար անձանց:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ անձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում:

Սույն գործում առկա ապացույցների ուսումնասիրության, ինչպես նաև կողմերի բերված փաստարկների համադրման ու գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ առկա չեն բավարար հիմքեր հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ 11.06.2014 թ-ի թիվ 2214503 արձանագրությունում նշված խախտումն ապացուցված համարելու համար:

Եկնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը եզրակացնում է, որ Ա/Ձ Վարդիթեր Խաչատրյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Վերսկսել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 21.08.2013 թ-ի թիվ 40/3 որոշմամբ կասեցված վարույթը:
2. Չեղյալ համարել ՀՀ ԿԱ ՊԵԿ Էրեբունու ՀՏ 24.06.2013 թ-ի թիվ 2122045 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ